Արձանագրություն N 3

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի կողմից **«Իրավաբանի» ծառայությունների** գնման նպատակով կազմակերպված թիվ **ԱՐԶՆԻՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/1** ծածկագրով գնման ընթացակարգի հրատապ բաց մրցույթի հայտերի գնահատման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» «ապրիլ» 2025թ.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ֆելիքս Միրզոնը, իսկ քարտուղարն էր՝ Մարի Մովսիսյանը:

Նախագահողը բացեց Հանձնաժողովի նիստը և հայտնեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի Հանձնաժողովի նիստն իրավազոր է, ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց հաստատել այն.

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԱՐԶՆԻՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/1 ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին**
2. **Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում**
3. **Հայտերի կազմման, յուրաքանչյուր փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, գնային առաջարկների և հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**
4. **Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին**
5. **ԱՐԶՆԻՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/1 ծածկագրով ընտրված մասնակցին որոշման և հայտարարության մասին**
6. **Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն**

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. **ԱՐԶՆԻՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/1 ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին**

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- **ԱՐԶՆԻՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/1** ծածկագրով մրցույթի հայտերը բացվել են **2025 թվականի ապրիլի 18-ին, ժամը 10:00-ին**:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում

Հայտերի բացումը տեղի է ունեցել 2025թ-ի ապրիլի 18-ին ժամը 10:00-ին: Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Մասնակիցների անվանումները	Հասցե, էլ.փոստ
ՕՀԱՆՅԱՆ և ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ	ohanyan.legal@mail.ru
ԼԵԳԻՏԻՄՈՒՍ ՍՊԸ	info@legitimus.am
ԱՍՊԵԿՏՈՒՍ ՍՊԸ	aspectus21@gmail.com

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հայտերի կազմման, յուրաքանչյուր փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, գնային առաջարկների և հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները /պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով/.

No.	*Գնման Գին*	**Մասնակցի անվանումը**	**Արժեք**	**ԱԱՀ****	**Ընդհանուր գինը**
1	3 000 000	ԼԵԳԻՏԻՄՈՒՍ ՍՊԸ	1,900,000.00	380,000.00	2,280,000.00
		ՕՀԱՆՅԱՆ և ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ	1,900,000.00	380,000.00	2,280,000.00
		ԱՍՊԵԿՏՈՒՍ ՍՊԸ	1,883,333.33	376,666.67	2,260,000.00

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1. Մասնակիներցի կողմից ներկայացված հայտերը ներառում են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
2. Մասնակիներցի կողմից հայտերում ներառված փաստաթղթերը կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝
Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

4 Ընտրված մասնակցին որոշման և հայտարարության մասին

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3–րդ կետը՝ նախաորակաորման ընթացկարգի արդյունքում հայտ ներկայացրած բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «ԱՐԶՆԻՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/1» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց **ընտրված մասնակից ճանաչել ԱՍՊԵԿՏՈՒՍ ՍՊԸ-ին :**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5 Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց.

ա) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հրապարակել տեղեկագրում:

գ) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆելիքս Միրզոն

Հանձնաժողովի անդամներ՝

Էդիկ Աֆյան

Նելլի Հարությունյան

Կլարա Իսակովա

Տոմա Իվանովա

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարի Մովսիսյան